

Handwritten text in a cursive script, possibly a name or title.

Handwritten text in a cursive script, possibly a name or title.

Ltn

V 1064

1912

№ 22
ՏԻԿԻՆ

1999

ԺՈՒԾԱՆԻԿ

ԵՐԱՆԳՈՒԼԵԱՆ

ԲՍԱՆԵԻՅԻՆԳԱՄԵԱԿԻ ԱՌԻԹՈՎ

(ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ՆՈԹԵՐ)

ԼԿՈ

1064

Գրեց ՀԱՏԷՐԱՍ


43729-4.4

ՏԻԿԻՆ

ՇՈՒՇԱՆԻԿ



ԵՒԱՆԳՈՒԼԵԱՆ



(ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ՆՈԹԵՐ)

Թ Ի Ֆ Լ Ի Ս
Արագածիկ «Էդուկացիոն»
1912

Գրեց ՀԱՏԷՐԱՍ



(28124-62)

ՀԲ 1064

11064-60+



ՏԻՎԻԶ ՇՈՒՇԱՆԻԿ ԵՒՍԵՂՈՒԼՅԱՆ



Գաւառական կեանքը լի է իրական
կեանքով, նա աւելի աշխոյժ է, աւելի մօտ
ազգային կեանքին և այնտեղ են սովորա-
բար ծնւում այն փոքրիկ ու համեստ գոր-
ծիչները, որոնց գործունէութեան արձա-
կանքի շնորհիւ այլասեռուած մեծ քաղաք-
ներում նմանիներ են ծնւում: Նս յիշում
եմ գիւղի գաղափարական ուսուցչին, որ
ճաշից յետոյ՝ երեկոյեան դէմ հաւաքու-
ծութեան, շերամաբուծութեան խուլ լեկ-
ցիաներ էր կարգում: Նրեք տարի յետոյ
պատահմամբ այցելելով այդ գիւղը, ես լը-
սեցի, որ ամբողջ գիւղը շերամապահու-
թեամբ է զբաղւում և Թիֆլիսցի մի յայտ-

նի հարուստ արդէն շերամապահական մեծ կայարան է բացել այգտեղ:

Ահա թէ ինչ կարող է անել փոքրիկ միջավայրի աշխատասէր համեստ գործիչը:

Այդպիսի համեստ գործիչների շարքին է պատկանում նաև տիկին Շուշանիկ Տէր Սաչատրեան Եւանգուլեանցը, որ համեստ կերպով աշխատել է հայ գաւառական համեստ միջավայրում:

Տիկին Շուշանիկի ծնողները ժամանակին յայտնի էին իրենց հայրենի Թելաւ քաղաքում: Հայրը՝ Տէր Սաչատուր ավագ խաչակիր քահանայ Սուքիասեանցը, որ երկար տարիներ գործակալ էր, մի պատկառելի մարդ էր և ամբողջ գաւառում էլ յարգուած որպէս հասկացող, ուսումնասէր և լաւ հայ, իսկ մայրը յայտնի Լիսինեանց ընտանիքիցն էր և Սղնախում նրանց ընտանիքը յայտնի էր որպէս առաջին կարգի վաճառականներ, որոնք Մարսէլի և Ճենովայի հետ առևտրական կապեր ունէին և մի ժամանակ մեծ հարստութեան տէր էին:

Ահա այսպիսի ծնողներից ծնուեցաւ Շուշանիկը 1863 թ. մարտի 10-ին: Փոքր

հասակից ժիր ու կենդանի աղջիկն արդէն ցոյց էր տալիս իր ընդունակութիւնները և 1877 թուականին յաջողութեամբ աւարտեց Թելաւ հայրենի քաղաքի Հայոց եկեղեցական-ծխական Գայիանեան օրիորդաց ուսումնարանը, որով և վերջակէտ դրուեց նրա կրթութեան սահմաններին:

Դպրոցի գրասեղանին համարեա մի տարի յետոյ յաջորդեց ամուսնական կեանքը և 1878 թ. նա ամուսնացաւ Թիֆլիսեցի պատուաւոր տոհմական քաղաքացի Միխայիլ Բօղդանիչ Եւանգուլեանցի հետ, որ գինու մեծ պահեստ ունէր և հաստատուեցաւ Բագու քաղաքում: Միխայիլ Բօղդանիչը լինելով ուսումնասէր և բաւական զարգացած մարդ, անմասն չթողեց իր կողակցին լուսոյ ճառագայթներից և 17 տարի շարունակ օգնելով Շուշանիկին հասցրեց այն զարգացման, որ նա արդէն բաւական պատրաստուած էր կեանքի բոլոր ելևէջների նպատակն հասկանալ: Դեռ նոր նա տեղափոխուել էր Բագու, որ արդէն ամուսնու հետ սկսեց երևալ հայոց հասարակական կեանքում, նրան կը տեսնէիք բոլոր

այն գուարձութիւններն ժամանակ, երբ Բագուի հայ ինտելիգենցիան ուղղում էր բարեգործութեամբ լիացնել մի որևէ հաստատութիւն՝ բարեգործական հանդէսներ, ներկայացումներ և այլն սարքելով:

Առաջին անգամ հէնց Բագուում էլ բեմ դուրս եկաւ տիկին Շուշանիկը 1881 թուին՝ խաղալով Գ. Սունդուկեանցի «Բանդած օջախ» կօմեդիայի մէջ երգող Փօփօյի և «Լօտօյի նօմէրներ հանող» Մարթայի դերերը:

Այս խաղը կարծես թէ բաղդը վճռող լինէր, յաջողութիւնը կատարեալ էր և այնուհետև ի հարկ է բոլոր ներկայացումների ժամանակ տիկինն իր որոշ տեղն ունէր, ու առանց մերժելու միշտ սիրով ընդունում էր հրաւերը:

Զաչէտք է մոռանալ որ հայ թատրոնի կեանքում եօթանասնական թուականների վերջը և ութսունականի սկիզբն ունի որոշ անուն, ըստ իս ոսկէ-դար, որովհետև Թիֆլիսում գործում էր իշխ. Նապօլէօն Ամատունու ջանքերով կազմուած խումբը, երեւացին Ադամեանն ու Աստղիկը, սկսուեց

գեղարուեստական շարժումը, և մեծ քաղաքներում անգամ դժուար էր լինում դերասանուհիներ և կամ սիրող կանայք գտնել, ուր մնաց գաւառում. իսկ այդ ժամանակ Բագուն այն չէր, ինչ որ այժմ և գաւառական հասարակ քաղաքի տպաւորութիւն էր թողնում, հայ կեանքը նոր էր շարժուել, որի արդիւնքն եղաւ Մարդասիրական ընկերութեան հիմնադրութիւնը և եթէ ներկայացումներ էին տրւում, այնուամենայնիւ դժուար էր կանանց դերերի համար կին-սիրողներ գտնել. շատ դէպքերում դրանց փոխարինում էին տղամարդիք: Ահա այս հանգամանքներում տիկնոջ երևալը բեմի վրայ արդէն ստեղծել էր շարժում ու ի յարկէ բարի օրինակ դառել շատ շատերի համար, մանաւանդ որ նա այդ անում էր ոչ թէ շահադիտական տեսակէտներով, այլ հայ բարեգործութեան պնակում իր լուծան նետած լինելու համար: Նա չէր քաշուում մասնակցելու նաև թէ խմբական և թէ մենաձայն համերգներին և այդպիսով օրինակ դառնում շրջապատող հայ գաղոյթի համար:

1882 թուին տ. Եւանգուլեանը Պետեր-

բուրգ գնաց, ուր մնալու էր մի ամբողջ տարի: Այստեղ էլ նա երևաց հայ բեմի վրայ դարձեալ «Քանդած օջախում»: Օգտուելով առիթից նա Պետերբուրգում ուսաւ կար ու ձևի արհեստը և 1883 թ. վերադառնալով հայրենի թեւաւ քաղաքը, սկսեց գործնականապէս վարժուել այդ արհեստին: 1885 թ. վերադառնալով Բագու, արդէն զիմեց գործնականապէս գործադրելու կար ու ձևի արհեստը բանալով այնտեղ սեփական կուրսեր, որ մեծ ծառայութիւն մատուցց հասարակութեան զանազան խաւերին: Այստեղ պէտք է մատնանշել, որ առհասարակ տ. Եւանգուլեսանի մէջ կար մի բան՝ մտցնել նորութիւններ կեանքի մէջ. զրա արդիւնք պիտի համարել և խոհարարական կուրսերի բացումը, որ ինքը սովորելով երկու ամառ շարունակ ինչպէս Թիֆլիսի Հայուհեաց Բարեգործական ընկերութեան, այնպէս էլ տ. Բոտինեանցի խոհարարական կուրսերում, անմիջապէս բացաւ կուրսեր և սկսեց մատչելի գնով տանտիկիւններ պատրաստել:

Այս բոլորի հետ զուգընթացաբար նա չէր թողնում բեմը, հայ հաստատութիւններ-

րի օգտին եղած երեկոյթ-ցերեկոյթները. Մարդասիրական ընկերութեան 25-ամեակի ժամանակ նա գործադիր մարմնի մէջ կատարողական դեր ունէր իր վրայ վերցրած:

1895 թ. արդէն պարզուեց, որ Եւանգուլեսան ընտանիքի Բագու մնալը դժուար է, քանի որ Միխայիլ Բագդանովիչի առևտրական գործերը փճացել էին և ամբողջ ընտանիքը տեղափոխուեց Թիֆլիս որով և փակուեցան տիկնոջ բացած Բագուի կուրսերը:

Տփլիսում տիկինը հրաւիրուեցաւ իբրև վարժուհի քաղաքային կար ու ձևի ուսումնարանի, որ պաշտօնի մէջ նա մնաց 6 տարի շարունակ:

1902 թ. նա խաղում էր արդէն Թիֆլիսի ժողովարանում Իշխանուհի Մարիամ Թումանեանցի հրաւերով. սիրողների խմբի ղեկավարն էր գերասան Արաքսեանը: Բայց շուտով նա ստիպուած եղաւ հրաժարուել, որովհետև վախճանուեց ամուսինը:

1903 թ. հրաւիրուեցաւ Ալէքսանրապօլ որպէս աւագ վարժուհի տեղոյն քա-

դաքային նորաբաց կար ու ձևի ուսումնարանի, որը բացուեց հէնց իր ներկայութեամբ նոյն տարուայ հոկտեմբերի 5-ին և ահա իննը տարի է, որ պաշտօնը նա վարում է և միևնոյն ժամանակ դասաւանդում:

Ալէքսանդրապօլում, որքան ինձ յայտնի է, նա նոյն ժրաշան մեղուն է և այդ հայաքաղաքը ընդհակառակը աւելի ևս լայն բացեց գործունէութեան շրջանը, այդտեղ էլ ամեն մի թշուառութիւն նրա սրտում արձագանք է գտնում. բերենք օրինակներ. հայ սովելոց համար նա ներկայացում կազմակերպեց, իսկ երբ, Նախիջևանը հրոյ ձառակ դարձաւ հայ-թրքական ընդհարումների ժամանակ լինելով յանձնախմբի անդամ և հաւաքելով հանդերձակաւորներ, օր.օր. Մանուկեանի և Դրմբեանի օգնութեամբ ձեւելով ու կարելով պատրաստ հանդերձեղէն յանձնեց յանձնախմբին ուղարկելու հայ թշուառների համար:

Առհասարակ ամեն մի դէպք, որ կարիք է զգացել նիւթական օգնութեան, լինի դա յօգուտ թշուառի, յօգուտ որևէ յօբեւեարի և կամ այլոց միշտ կենդանի արձա-

դանք է գտել Տիկին Շուշանիկի սրտում և նա պատրաստ է եղել իրովսան նպաստել գործին:

Ներկայումս նա փոխ-նախագահ է «Խըրմեան աշակերտախնամ ընկերութեան» և կանանց կրթօկի» վարչութեան անդամ, ինչպէս նաև դեկավար սիրողների խմբի, որը տուել է մի շարք ներկայացումներ ինչպէս ժողովրդական այնպէս էլ, բարեգործական նպատակով:

Իբրև հմուտ սիրող Տիկին Շուշանիկն աւելի աչքի է ընկնում Սունդուկեանի պիէսներում, նա Պէպօյի Եփէմիան է, «Քանդած օջախ»ի Սալօմէն, Խաթաբալայի Խամփերը «էլի մէկ զոհ»ի Սալօմէն, այլ պիէսներում նոյնպէս ունի նա իր դերեր, մանաւանդ լաւ է խաղում Խանումը, և այլն:


Ինչ վերաբերում է նրա դարոցական կեանքին, նա ունի բազմաթիւ աշակերտուհիներ, որոնցից ոմանք ներկայումս վարժուհուքիւն են անում, իսկ մնացեալներն էլ կամ իրենց ընտանիքի համար աշխատում և կամ նոյնիսկ այդ արհեստով ապրում:

Այս մի քանի խօսքի մէջ տալով տիկ-

նոջ անցեալն ու ներկան, ես կը բարեմաղթէի տեսնել աւելի փայլուն ապագան, որ պէսզի աւելի ևս շատ օգտուէր մեր գաւառը այդպիսի համեստ և ժրաշան գործչուհուց:

Թող սա օրինակ լինի շատ շատերի համար, թող սա լինի մի լուսաստղ, որ պէտք է առաջնորդէ գաւառական երիտաւարդ ինտելիգենցիային տոգորուած սիրով դէպի հայ մարդը, հայ բեմը, հայ հասարակական խոսքի ասպարէզը, հայ դպրոցը և նրանց ի մի շաղկապէ:

Ինձ, տողերիս գրողին, որ առիթ եմ ունեցել տեսնելու այդ տիկնոջ գործունէութեան փառաւոր մասը, մնում է միայն ասել՝—կեցցէ տիկին Շուշանիկը, կեցցէ հայ խինդով խնդացող, հայ լացով լացող տիկին Շուշանիկը:





Spec 54.

ՀՀ Ազգային գրադարան



NL0108403

